ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 12-Ն

27 ապրիլի 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N 64-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 64-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Բյուջեի եկամտային մասի <<Ընդամենը եկամուտներ>> տողի <<137762.6>> թիվը փոխարինել <<142246.6>> թվով, այդ թվում՝
   1) Բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7421 հոդվածի <<Պետության կողմից տեղական ինքանկառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ>> տողի <<5361.1>> թիվը փոխարինել <<5357.1>> թվով:
2) Համայնքի բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7421 հոդվածի (օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ տողի <<4560.0>> թիվը փոխարինել <<9048.0>> թվով:
2. Բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման <<Ընդամենը ծախսեր>> տողի <<Ընդամենը>> սյունակի <<185974.9>> թիվը փոխարինել <<190458.9>> թվով, վարչական մաս սյունակի <<138172.6>> թիվը փոխարինել <<142656.6>> թվով, այդ թվում՝
   1) Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածի <<3000.0>> թիվը փոխարինել <<2000.0>> թվով:
   2) Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 07 (հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<1000.0>> թվով:

3) Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 01, խումբ 03, դաս 03 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի պահպանման ծախսեր)) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<68.2>> թիվը փոխարինել <<64.2>> թվով:

4) Բյուջետային ծախսերի. գործառական դասակարգման բաժին 09, խումբ 01, դաս 01 (նախադպրոցական կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4511 (սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային)) կազմակերպություններին հոդվածի <<11118.0>> թիվը փոխարինել <<15606.0>> թվով:

5) Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4823 (պարտադիր վճարներ) հոդվածի <<150.0>> թիվը փոխարինել <<96.0>> թվով:

6) Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 01, դաս 01 (աղբահանում) և տնտեսագիտական դասակարգման 4822 (այլ հարկեր) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<54.0>> թվով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -2

1. ՉԱՔԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՔ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ
4. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՓԻԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՈՒՌՈՒՏՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱԼՈՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
27 ապրիլի 2017 թվական